



GAW-ի Առաքելութիւն

GAW_ը աշխարհի զանազան վայրերու մէջ գտնուող բողոքական համայնքներուն իր աջակցութիւնը կը ցուցաբերէ՝ առիթ ընծայելով անոնց ազատօրէն ապրելու իրենց հաւատքը Յիսուս Քրիստոսի հանդէպ եւ աշխատելու իրենց միջավայրին մէջ:

GAW-ը իր գործընկեր եկեղեցիներու նախագիծերուն կը սատարէ: Փոխադարձ ուսուցման միջոցով սոյն հաստատութիւնը առիթ կու տայ հանդիպումներու, կը հարստացնէ կրօնական կեանքը եւ կը խթանէ հանդուրժողականութիւնը:

GAW_ը սփիւռքի տարածքին ապրող բողոքականներուն, տարածաշրջանային եկեղեցիներուն եւ Գերմանիոյ Բողոքական եկեղեցոյ (EKD) շնորհիւ կը պահպանէ բողոքական գիտակցութիւնը: GAW_ը եքիւմէնիք աշխարհի մէջ կը զօրացնէ բողոքականութեան ձայնը:

GAW-ը կը ներգրաւէ կիներուն եւ տղամարդոց աշխոյժ համագործակցութիւնը: Ան յուսալի գործընկեր է եւ ամէն ձեւով ի գործ կը դնէ իրեն վստահուած միջոցները:

GAW-ը հիմնադրուած է 1832 թուականին Լէյպպիքի մէջ, «Կուսթաֆ-Ատոլֆ» հիմնադրամ անուանումով: 1851 թուականէն սկսեալ կը գործէ տիկնաց անկախ հաստատութիւնը: GAW-ը Գերմանիոյ Բողոքական եկեղեցոյ (EKD) սփիւռքի բաժինն է:

GAW-ը աստուածաշունչի հետեւեալ խօսքը կ'ընդունի. "Ուրեմն, քանի պատեհութիւն ունինք, բարի՛ք ընենք բոլորին, մանաւանդ՝ հաւատքի ընտանիքէն եղողներուն": (Գաղատացիս 6,10)